Հայտարարություն

«Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է **մրցույթ՝** դասախոսների թափուր տեղերի համալրման նպատակով, որի համար կարող են դիմել ներքոնշյալ մասնագիտությունը ունեցող անձինք.

1. **Պատմության ուսուցիչ** «Պատմություն» հանրակրթական առարկան դասավանդելու համար
2. **Ինֆորմատիկայի ուսուցիչ՝** «Ինֆորմատիկա» հանրակրթական առարկան դասավանդելու համար
3. **Նկարիչ՝** միջին մասնագիտական կրթական ծրագրով «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտություններով ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներ դասավանդող

Մրցույթն անց է կացվելու մեկ փուլով՝ բանավոր, հարցազրույցի միջոցով, հաստատության կողմից նախապես կազմված հարցատոմսերով, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում «Ձև 1», մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

-անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն «Ձև4»,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել կադրերի բաժին **դեկտեմբերի 1-ը ներառյալ**:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 3-ին՝ ժամը 11:00-ին, «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ք. Աբովյան Ուսանողական նրբանցք 4:Հարցերի համար զանգահարել 060-75-20-50 հեռախոսահամարին աշխատանքային օրերին 10:00-16:00 կամ գրել մեր էլ. հասցեին՝ absecollege@mail.ru :

Սիրով սպասում ենք Ձեզ: